ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և գործի քննությունը դռնփակ անցկացնելու մասին

18 հունիսի 2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԼՏ-Պիրկալ» ՓԲ ընկերությունն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ՄԱԱՇՁԲ-13-37» ծածկագրով գնման պայմանագրի 29.04.2026թ. միակողմանի լուծումը և ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 07.05.2026թ. թիվ 237 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԼՏ-Պիրկալ» ՓԲ ընկերության ներկայացուցիչը 2026թ. հունիսի 16-ին (կապի կազմակերպություն է հանձնվել 2026թ. հունիսի 5-ին) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ՄԱԱՇՁԲ-13-37» ծածկագրով գնման պայմանագրի 29.04.2026թ. միակողմանի լուծումը և ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 07.05.2026թ. թիվ 237 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավորի աշխատակազմին է տրամադրվել 2026թ. հունիսի 17-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության, պաշտպանության

նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատական վարույթը կամ դրա մի մասը կարող է անցկացնել դռնփակ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17, 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԼՏ-Պիրկալ» ՓԲ ընկերությունն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ՄԱԱՇՁԲ-13-37» ծածկագրով գնման պայմանագրի 29.04.2026թ. միակողմանի լուծումը և ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 07.05.2026թ. թիվ 237 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ և գործի քննությունն անցկացնել դռնփակ:

Թիվ ԵԴ2/6988/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. հուլիսի 24-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ